25.352

15 JAN 2010

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

ԽՍՀՄ ՖԺԿ
Պետաշխնամագրամարկղների
յեվ պետվարիի
Գլխավոր վարչություն
10 մարտի 1940 թ.
№ 19 ՈՒՊՐ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՊԵՏԱՇԽՆԱՄԳՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՑԵՎ
ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԴՐՈՒՅԱ
7 ՄԱՐՏԻ 1940 թ.

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՂԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԻ ՀԱՄԱՐ (ՎԱՐԻՉՆԵՐ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ, ՏԵՍՈՒՉՆԵՐ, 1-ԻՆ ԿԱՐԳԻ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐ, ԱՎԱԳ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ ՑԵՎ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ, ԱՎԱԳ ՎԵՐԱՀՍԿԻՉՆԵՐ, ՎԵՐԱՀՍԿԻՉՆԵՐ, ԱՎԱԳ ԳԱՆՁԱՊԱՆԵՐ, ԳԱՆՁԱՊԱՀՆԵՐ ՑԵՎ ՈՊԵՐԱՑԻՈՆ-ՀԱՇՎԱՅԻՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ)

1. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Խորհրդային խնայողական դրամարկղների նշանակությունը՝ սոցիալիստական չինարարության ֆինանսավորման համար բնակչության խնայողությունները ներգրավելու գործում:

Խորհրդային խնայողական դրամարկղների սկզբունքային տարբերությունը կապիտալիստական յերկրների խնայողական դրամարկղներից:

Խնայողական դրամարկղների կողմից ավանդներում ներգրավվող միջոցների արտադրական ոգտագործումը ԽՍՀՄ-ում:

Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքի պահպանումն որենքով՝ նրանց աշխատավորական յեկամուտների և խնայողությունների նկատմամբ— Ստալինյան Սահմանադրության 10-րդ հոդվածը:

ԽՍՀՄ աշխատավորների խնայողությունների աճումը վորպես բնակչության բարեկեցության և կուլտուրական մակարդակի վերելքի ցուցանիշներից մեկը:

Խնայողական գործի զարգացման ընդհանուր բնույթագիրը ԽՍՀՄ-ում: Խնայողական դրամարկղների ավանդներում հավաքվող միջոցները ԽՍՀՄ բյուջեյում:

Բնակչության ավանդների ներգրավման պլանները խնայողական դրամարկղների զանազան ողակների համար:

Աշխատողների առանձին կատեգորիաների պարտականություններն ավանդների ներգրավման պլանի կատարումն ապահովող ձեռնարկումների անցկացման գործում: Ավանդների մասսայական — բացատրական աշխատանքները և ավանդատուների սպասարկման բարելավումը: Մասսայական-բացատրական աշխատանքների ձևերն ու մեթոդները: Հասարակայնության մասնակցությունը մասսայական-բացատրական աշխատանքնե-

3537
40

ՀՍՍՀ-ՍՍՀ

4 SEP 2013

25.352

բում: Պետական վարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովը: Ցուրաքանչյուր խնայողական դրամարկղի շուրջն ակտիվ ստեղծելը և այլն:

«Պետական աշխատավորական խնայողական դրամարկղների որինագրությամբ» ավանդատուներին տրվող իրավունքներն ու առավելությունները:

Առանձին քաղաքացիների և կազմակերպությունների ընթացիկ հաշիվները: Կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների ընթացիկ հաշիվները: Կանոններ չեկերի մասին:

Ավանդների տոկոսների դրույքները էտոկոսներն ավանդատուներին վճարելու կարգը:

Անչափահասներին և խնամակալության տակ գտնվողներին պատկանող ավանդների տնորինման կարգը:

Արտասահմանում գտնվող խորհրդային քաղաքացիների և ոտարերկրացիների կողմից իրենց ավանդները տնորինելու կարգը:

Ավանդների հավատարմագրերի և կտակային կարգադրությունների ձևակերպումը և ավանդներն այդ փաստաթղթերի հիման վրա տալու կարգը:

Ավանդը կալանքի և տույժի յենթարկելու համար դատական-քննչական մարմինների կարգադրությունների կատարման կարգը:

Ավանդների գործառնությունների ձևակերպման կարգը, կիրառվող բլանկները և նրանց նշանակությունը: Սկզբնական մուծման և լրացուցիչ մուծման ձևակերպումը, ավանդի մի մասի և ամբողջ ավանդի տալու ձևակերպումը: Ավանդի տալը կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի կողմից՝ ի հաշիվ յենթակա դրամարկղի: Ժամկետային ավանդների, ընթացիկ հաշիվների, ներկայչական ավանդների գործառնությունների ձևակերպումը: Հաշվային շրջանառություններ: Գրելով լցված-վերջացած խնայողական դրքույկների փոխարինումը և կորցրածների փոխարեն նորերը տալը:

Անկանխիկ հաշվարկումների նշանակությունը, այն վճարումների տեսակները, վորոնց համար անկանխիկ հաշվարկումներ են կատարվում: Անկանխիկ հաշվարկումների (ժիրո գործառնությունների) փաստաթղթերի ձևերը և ձևակերպման տեխնիկան:

Միացյալ և անշարժ հաշիվներ:

Փոխադրական գործառնությունների նշանակությունը և նրանց ձևակերպման կարգը:

Ակկրեդիտիվային գործառնությունների նշանակությունը և նրանց ձևակերպման տեխնիկան:

Կոմիսիոն գործառնություններ, չքաղաքներով և մեդալներով դրամ տալու գործառնությունների ձևակերպումը, թռչակների վճարման տեխնիկան, Պաջը-Ավիաքիմի վիճակախաղային տոմսերի շահումների վճարման տեխնիկան, Պետապի հանձնարարություններով կատարվող գործառնությունների տեսակները և տեխնիկան, կուսակցական և կոմյերիտական անդամավճարների գումարների ընդունման գործառնությունների տեխնիկան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

(Շրջանային) կենտրոնական խնայողական դրամարկղների վարիչների, գլխավոր հաշվապահների և տեսուչների համար:

Ավանդների պլանի կատարման վերլուծումը և այդ հիման վրա խնայդրամարկղների աշխատանքների բարելավման ձեռնարկումների մշակումը:

Վիճակագրական հաշվետվություն ավանդների պլանի կատարման մասին:

Ոժանդակ ձեռնարկներ

1. ԽՍՀՄ Սահմանադրությունը, գլուխ 1:

2. «ԽՍՀՄ պետական փոխառությունները և խնայողական գործը»: Կարևորագույն որենսդրական նյութերի ժողովածու 1917—1937 թ. թ. Վ. Պ. Դյաչենկոյի ներածական հոդվածով— «ԽՍՀՄ պետական վարկի և խնայողական դրամարկղների զարգացման համառոտ ակնարկ», ՊՖՀ, 1938 թ.:

3. Լ. Վալլեր— «Խնայողական գործը»— 2-րդ, ուղղված հրատարակություն, 1938 թ.:

4. Ռագովեր— «Պետական փոխառությունները, խնայողական դրամարկղները և կյանքի կոլեկտիվ ապահովագրությունը»:

5. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին տրվող ավանդների համար, № 22, 1939 թ. 5 մարտի:

6. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին՝ անշարժ ավանդների պահպանման և վճարման համար, № 23, 1939 թ. 5 մարտի:

7. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին տրվող ժամկետային ավանդների համար, № 42, 1939 թ., 23 մայիսի:

8. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին՝ անկանխիկ հաշվարկումների համար, № 1, 1939 թ. 2 հունվարի:

9. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին՝ փոխադրական գործառնությունների համար, № 48, 1938 թ. 11 սեպտեմբերի:

10. Հրահանգ պետաշխնայդրամարկղների ակկրեդիտիվների գործառնությունների համար, 1938 թ.:

11. Գլխավոր Վարչության 1939 թվի սեպտեմբերի 20-ի № 60 շրջաբերականը:

12. Հրահանգ խնայողական դրամարկղներին՝ կուսակցական և կոմյերիտական անդամավճարների գումարներն ընդունելու համար, 13 մարտի 1938 թ. № 129/34:

13. Հրահանգ խնայողական դրամարկղներին՝ Պաջը-Ավիաքիմի համամիութենական վիճակախաղերի տոմսերի դրամական շահումների վճարման կարգի մասին, 5 հունիսի 1939 թ. № 30:

14. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին՝ Պետապի հանձնարարություններով գործառնություններ կատարելու կարգի մասին, 4 հոկտեմբերի 1939 թ. № 52:

15. Հրահանգ պետական աշխատավորական խնայողական դրամարկղներին՝ ԽՍՀ Միության չքանշաններով ու մեդալներով և միութենական հանրապետությունների չքանշաններով գումարներ վճարելու կարգի մասին, 8 հունվարի 1939 թ. № 5:

16. Ցեվ ԽՍՀՄ ՖԺԿ-ի և Պետաշխնայդրամարկղների ու Պետվարկի Գլխավոր Վարչության մյուս գործող հրահանգներն ու կարգադրությունները:

2. ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ

Պետական փոխառությունների տնտեսական և քաղաքական նշանակությունը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ի պետական փոխառությունների սկզբունքային տարբերությունը կապիտալիստական յերկրների պետական վարկից:

Պետական փոխառությունների զարգացման ընդհանուր բնութագիրը ԽՍՀՄ-ում: Պետական փոխառությունները ԽՍՀՄ-ի բյուջեյում:

Պետական վարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովի խնդիրներն ու դերը:

Գործող փոխառությունների կառուցվածքը (թողարկման պայմանները): Փոխառությունները քաղաքում և գյուղում բաժնեգրությամբ իրացնելու կազմակերպումը, պայմանները և կարգը:

Խնայողական դրամարկղների սիստեմի զանազան ողակների համար սահմանված պետական փոխառությունների մուտքերի պլանները: Աշխատողների առանձին կատեգորիաների պարտականությունները՝ փոխառության բաժնեգրության միջոցների մուտքերի պլանի կատարումը, բաժնեգրության գումարի պահպանումը և պարտատոմսերի ժամանակին հանձ-

նումն ապահովող ձեռնարկություններն անցկացնելու գծով:

Փոխառության իրացման հաշվարկումները, հաշվառումը և հաշվետվությունը ձեռնարկությունների և հիմնարկությունների հաշվապահություններում:

Փոխառության իրացման հաշվարկումները, հաշվառումը և հաշվետվությունը գյուղխորհուրդների լիազորների և ֆինանսական գործակալների մոտ:

Փոխառության հաշվարկումների ձևակերպումը, բաժնեգրության և մուտք չեղած մուծումների ոպերատիվ (սկզբնական) հաշվառումը, հրապարակություն փոխառության մուծումների մուտքերի ժամանակին և լրիվ չափով լինելու վրա:

Վճարված պարտատոմսերը բաժանորդներին հանձնելու կարգը: Բաժանորդներին չհանձնված պարտատոմսերը ձեռնարկություններից, հիմնարկություններից և ֆինանսական գործակալներից խնայողական դրամարկղների կողմից ընդունելու կարգը, և այդ պարտատոմսերը հետագայում բաժանորդներին հանձնելու կարգը:

Պարտատոմսերը կանխիկ հաշվով վաճառելու և գնելու գործառնությունների ձևակերպումը: 1938 թվի փոխառության իրացման պայմաններն ու կարգը: Պետական փոխառությունների պարտատոմսերի գները:

Պետական փոխառությունների շահումների խաղարկությունների անցկացման նշանակությունը և կարգը: Կտրոնների, շահումների և տիրաժային պարտատոմսերի վճարման գործառնությունների ձևակերպման տեխնիկան: Պարտատոմսերի իսկականությունը և վճարելիությունն ստուգելու կարգը, պարտատոմսերի կեղծությունը ճանաչելու յեղանակները: Քրեական պատասխանատվություն՝ պարտատոմսերը կեղծելու համար:

Մոչոր շահումներ ունեցող պարտատոմսերը, նաև իրենց վճարելիության մեջ կասկածներ հարուցող պարտատոմսերը եքսպրտիզային ուղարկելու համար խնայողական դրամարկղների կողմից ընդունելը: Պարտատոմսերն իրենց տերերի կողմից կորցնելը և այդ կորուստի հետևանքները:

Պարտատոմսերը խնայողական դրամարկղների կողմից ի պահ ընդունելու պայմաններն ու տեխնիկան: Ի պահ ընդունված պարտատոմսերի կառավարումը:

Պետական փոխառությունների պարտատոմսերի դրավի դիմաց փոխառություններ տալու և մարելու պայմաններն ու տեխնիկան:

Պետական փոխառությունների տեղեկանքային աշխատանքները: Անպարտատոմս կառավարման քարտերի վաճառման գործառնությունների ձևակերպումը:

Խնայողական դրամարկղներին պարտատոմսերով մատակարարելու կարգը: Հայտեր կազմելու կարգը: Ստացված պարտատոմսերի ստուգումը և այդ ստուգման արդյունքների ձևակերպումը:

Դեպոզիտային և վճարված պարտատոմսերի հանձնումը (առաքումը) կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի պահեստարանին, և կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղից— Պետնիչ: Այդ առաքման ձևակերպումը: Պետական փոխառությունների պարտատոմսերի գործառնությունները շահումների խաղարկությունների անցկացման որերին:

ԽՍՀՄ ՖԺԿ դեպոյի կառավարումը: Կտրոններ կտրելը և պարտատոմսերի ստուգումը շահումների աղյուսակներով:

Մարված պարտատոմսերը (վճարված և ԽՍՀՄ ՖԺԿ-ի դեպոյից հանված) «Մարված արժեքների ստուգման և վոչնչացման հանձնաժողովին» ուղարկելու կարգը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Շրջանային (կենտրոնական) խնայողական դրամարկղների վարիչների, գլխավոր հաշվապահների և տեսուչների համար.

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների դերը ոժհանձնաժողովների աշխատանքներում: Ոժհանձնաժողովների ֆինանսավորումը: Ոժհանձնաժողովների միջոցների հաշվառման և ծախսման կարգը:

Պետական և կոոպերատիվ կազմակերպությունների մեջ իրացվող պետական փոխառությունները: Նրանց շրջանառության հաշվի կարգը:

Ֆինանսական գործակալների և գյուղխորհուրդների փոխառության լիազորների դոկումենտալ վերստուգում անցկացնելու կարգը:

Փոխառության հաշվարկումների դրված քի լրիվությունն ու ճշտությունն ստուգելու կարգը կենտվարչություններում և հիմնարկություններում:

Ոժանդակ ձեռնարկներ

1. ԽՍՀՄ Սահմանադրությունը— հոդ. 1—12:
2. «ԽՍՀՄ պետական փոխառությունները և խնայողական դրամարկղները», կարևորագույն որենդրական նյութերի ժողովածու՝ Վ. Պ. Դյաչենկոյի ներածական հոդվածով:
3. Գ. Ռադովեր— «Պետական փոխառությունները, խնայողական դրամարկղները և կյանքի կոլեկտիվ ապահովագրությունը»:
4. Հրահանգ ԽՍՀ Միության պետական փոխառությունների պարտատոմսերի դրավի դիմաց փոխառություններ տալու կարգի և պայմանների մասին, № 55 (սխեմա Ա—42), 29 հոկտեմբերի 1938 թ. (յերկրորդ հրատարակություն):
5. Հրահանգ կտրոնները, շահումները և մարման խաղարկություններով անցած պարտատոմսերը խնայողական դրամարկղների կողմից վճարելու կարգի մասին, № 59 (սխեմա Բ— 7) 3 նոյեմբերի 1938 թ. (2-րդ հրատ.):
6. Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող պետական փոխառությունների պարտատոմսերը խնայողական դրամարկղների կողմից պահելու կանոններ, № 24 (սխեմա Ա—14) 7 մարտի 1939 թ.:
7. ՑԵՎ ԽՍՀՄ ՖԺԿ-ի ու պետաշխ-խնայդրամարկղների և Պետարկի Գլխավոր Վարչության մյուս հրահանգներն ու կարգադրությունները:

3. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ԽՍՀ Միության պետական աշխատավորական խնայողական դրամարկղների որինադրությունը», վորով սահմանվում են խնայողական դրամարկղների սիստեմի կազմակերպման հիմունքները:

Խնայողական դրամարկղների սիստեմի կազմակերպչական կառուցվածքը, խնայողական դրամարկղների սիստեմի առանձին ողակների փոխհարաբերությունները ֆինանսական մարմինների հետ:

Ավանդների ներդրավման և պետփոխառությունների պլանը լավագույն կերպով կատարելու համար խնայողական դրամարկղների աշխատողների սոցմրցման նշանակությունը:

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների կառուցվածքն ու հատուցքը և նրանց կողմից կատարվող գործառնությունների շրջանակը: Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների առանձին աշխատողների ֆունկցիաները: Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների առանձին աշխատողների իրավունքներն ու պարտականությունները:

Սառին խնայողական դրամարկղների բաժանումն ըստ տիպերի: Առանձին տիպերի խնայողական դրա-

մարկղների կազմակերպչական և ֆունկցիոնալ տարբերությունը:

Կապի հիմնարկությունների կից խնայողական դրամարկղների կազմակերպման պայմանները և աշխատանքները:

Խնայողական դրամարկղների բացման, փակման և վերակազմման կարգը: Աշխատավարձը խնայողական դրամարկղների սիստեմում: Խնայողական դրամարկղների աշխատողների աշխատանքի վճարման պրեմիալ-խրախուսական սիստեմի դերը՝ միջոցների ներդրավման պլանի դերակատարման խթանման գործում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Շրջանային (կենտրոնական) խնայողական դրամարկղների վարիչների, գլխավոր հաշվապահների և տեսուչների համար.

Պետաշխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների ֆունկցիաներն ու կառուցվածքը:

Ֆինանսական տնտեսության կազմակերպումը խնայողական դրամարկղների սիստեմում: Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների յեկամուտների և ծախսերի նախահաշիվը, այն կազմելու և հաստատելու կարգը: Նախահաշվի առանձին հոդվածներով բաց թողնվող վարկերի նպատակային նշանակումը: Ծախսերի յեռամսյակային լիմիտները:

Վարկերի տնորինողները: Վարկերի գործողության ժամկետները: Նախահաշվա-ֆինանսային կարգապահություն: Հաստիքային կարգապահություն: Համատեղությամբ աշխատողների վճարման կարգը: Աշխատանքի հաշվետվությունը:

Խնայողական դրամարկղների կողմից ներդրավվող միջոցների ինքնարժեքը:

Ոժանդակ ձեռնարկներ

1. «Որոշադրություն ԽՍՀ Միության պետական աշխատավորական խնայողական դրամարկղների մասին», 29 փետրվարի, 1929 թ.:

2. ԽՍՀՄ ԺԿԿ-ի 1939 թվի նոյեմբերի 1-ի № 724/144 հրամանը՝ «Խնայողական դրամարկղների տիպերի և նրանց կողմից կատարվող գործառնությունների շրջանակի մասին»:

3. ԽՍՀ Միության և ԺԿԿ-ի Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչության պայմանագիրը ԽՍՀ Միության Կապի ժողկոմատի հետ, 31-ն հոկտեմբերի, 1938 թվի:

4. Ձեռնարկ ֆինանսական տնտեսությունը պետաշխնայդրամարկղների ու պետվարկի վարչություններում և կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղներում վարելու համար:

5. ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1932 թվի 29 սեպտեմբերի վորոշումը՝ «Գլխավոր և ավագ հաշվապահների իրավունքների և պարտականությունների մասին հիմնարկություններում և հանրայնացված սեկտորի տնտեսակազմակերպություններում:

4. ԴՐԱՄԱՐԿՂԱՑԻՆ ԳՈՐԾԸ

Պահեստարանների կառուցվածքը:

Պահեստարանների պահպանումը:

Պահեստարանն ընդունելու և պահպանության հանձնելու կարգը: Արժեքները պահեստարանում և անմիջականորեն դրամարկղում պահելու կարգը:

Արժեքների ինկասացիան:

5. ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Հաշվառման և վերահսկողության խնդիրը սոցիալիստական պետության մեջ: Հաշվառման և վերահսկողության խնդիրը խնայողական դրամարկղների սիստեմում: Հաշվառման տեսակները:

Սկզբնական հաշվառումն ու հաշվետվությունը յենթակա խնայողական դրամարկղներում: Խնայողական դրամարկղներում կիրառվող հաշվային-

հաշվետուական փաստաթղթերի ձևերը և նրանց նշանակումը: Գործառնության որագրերի վարման կարգը: Արժեքավոր բլանկների հաշվառումը: Պահեստարանի մատյանի վարման կարգը:

Որվա հաշվետվության կազմելը (գործառնության № 24 ձևի որագիրը, գործառության որագրի ձև № 25—ա հավելվածը և ձև № 24—ա գործառնության որագիրը) և այն կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի հաշվապահությանը ներկայացնելը:

Հաշվային-հաշվետվուական փաստաթղթերի պահպանումը մինչև նրանց կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի արխիվին հանձնելը:

Ամսական, յեռամսյակային և տարեկան հաշվետվությունը կազմելու հիմնական աշխատանքները: Ավանդատուների անձնական հաշիվների յեղրափակման կարգը տարվա վերջում, ձև № 19 քաղվածքների կազմումը, ձև № 19—ա քաղվածքների կազմումը դրավ դրված և պահ տրված արժեթղթերի և պետական փոխառությունների իրացման համար՝ ձև № 115 և ձև № 107 անձնական հաշիվներից:

ԼՐԱՑՈՒՄ № 1

Շրջանային (կենտրոնական) խնայողական դրամարկղների վարիչների, գլխավոր հաշվապահների և տեսուչների համար.

Կրկնակի սիստեմի հաշվառման հիմնական հասկացողությունը: Հաշվապահական հաշվառման և վերահսկողության կազմակերպումը խնայողական դրամարկղների սիստեմում:

Սկզբնական և ավարտված հաշվապահական հաշվառում: Բալանսի հաշիվների նոմենկլատուրան:

Բնակչության ավանդների ներդրավման պլանի կատարման ստուգումը շրջանառության տեղեկագրի տվյալներով:

Պետական փոխառությունների գործառնությունների դծովմիութենական, հանրապետական և տեղական բյուջեների հետ հաշվարկումներ կատարելու ճշտության ստուգումը:

Ցեկամուտների և ծախսերի նախահաշվային կատարումը: Զանազան անձերի և հիմնարկությունների (դեբիտորների և կրեդիտորների) հետ ունեցած հաշվարկումների ստուգումը: Հաշվապահական հաշվետվություն:

Ցենթակա խնայողական դրամարկղի աշխատանքների ստուգման մեթոդները:

ԼՐԱՑՈՒՄ № 2

Շրջանային (կենտրոնական) խնայողական դրամարկղների գլխավոր հաշվապահների համար.

Գլխավոր հաշվապահների իրավունքներն ու պարտականությունները հանրայնացված սեկտորի հիմնարկություններում և տնտեսակազմակերպություններում:

Հսկողություն դոկումենտալ հաշվետվություն ստացվելու վրա և նրա ստուգման մեթոդները:

Համադրական և վերլուծական հաշվառում:

Ավանդային գործառնությունների հաշվառումը: Հետագա վերահսկողություն:

Անկանխիկ հաշվարկումների գործառնությունների հաշվառումը:

Փոխադրությունների, ակկրեդիտիվների և սիստեմի ներսում յեղող այլ հաշվարկումների գործառնությունների հաշվառումը:

Կոմիսիոն գործառնությունների հաշվառումը:

Պետփոխառությունների գործառնությունների հաշվառումը:

Դրամական կանխիկի հաշվառումը:

Պետբանկի, ուրիշ հիմնարկությունների, դեբիտորների և կրեդիտորների հետ ունեցած հաշվարկումների հաշվառումը: Պակասորդների, սխալ վճարումների, հափշտակումների և յուրացումների գումարների հաշվա-

31163

ռումը։ Ձեռնարկումներ այդ դրամարները մարելու համար և պայքար՝ պետական միջոցները հափշտակելու դեմ։

Շենքերի, տնտեսական գույքի և նյութերի հաշվառումը։

Ցեկամուտների և ծախսերի հաշվառումը։

Արժեքավոր բլանկների հաշվառումը։

Կապիտալ ներդրումների (շինարարության) հաշվառումը։

«ԴՍՄ» սխեմի հաշվային-դրամաբենանների կիրառումը։

Ոժանդակ ձեռնարկներ

1. Գլեյխ— «Բալանսային հաշվառման սկզբնական դասընթաց»։

2. Վ. Կրուպլով — «Հաշվապահական հաշվառումը խնայողական դրամարկղներում»։

3. Ձեռնարկ հաշվառումն ու հաշվետվությունը կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների գործառնության մասերում, 1-ին և 2-րդ կարգի խնայողական դրամարկղներում և գործակալություններում վարելու համար, № 27 (սխեմա Բ—4) 28 մայիսի, 1938 թ.։

4. Կարգադրություններ խնայողական դրամարկղների կողմից կատարվող գործառնությունների ձևակերպման և հաշվառման մեջ փոփոխություններ մտցնելու մասին, № 40 (սխեմա Վ—5) 11 մայիսի 1939 թ.։

5. Ձեռնարկ հաշվապահական հաշվառումն ու հաշվետվությունը կենտրոնական և շրջանային պետական աշխատավորական խնայողական դրամարկղներում վարելու համար, № 66 (սխեմա Ա—49) 28 դեկտեմբերի 1938 թ.։

6. Ձեռնարկ արժեքավոր բլանկների մատակարարման և հաշվառման համար, № 19 (սխեմա Վ—2) 26 փետրվարի 1939 թ.։

7. Ցեվ Պետաշխխնայդրամարկղների ու Պետվարկի Գլխավոր Վարչության մյուս գործող ձեռնարկները, հրահանգները և կարգադրությունները։

Աշխատողների պետտեխնությունն անց է կացվում տվյալ ծրագրով, բայց վորոշ տարբերություններով, նայած տվյալ աշխատողի կոնկրետ բանվորական տեղին։

ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺԻՆ։

Պատ. խմբագիր՝ Ա. ԿԱՍՊԱՐՅԱՆ

Թարգմանիչ և սրբագրիչ՝ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գրավիչի լիազոր՝ Ա—507

Պատվեր № 582. Տիրաժ՝ 500.

Հայկական ԽՍՀ ԺԿՏ-ին կից թերթերի և ամսագրերի տպարան, Երևան

332
Ռ-88

<< Ազգային գրադարան
NL0209075